

ՀՀ ԼՈՒՈՒՒ ՄԱՐԶԻ «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊՓԲԸ-Ն ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՅՈՒՅԹՆԵՐ՝ ԲԻՈՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՆՏԻ (1 ԴՐՈՒՅՔԱԶԱՓ), ՌԵՆՏԳԵՆ ԼԱԲՈՐԱՆՏԻ (1 ԴՐՈՒՅՔԱԶԱՓ), ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 9 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲՈՒԺՔՐՈՋ (1 ԴՐՈՒՅՔԱԶԱՓ), ՆԵՐՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԴԵՂԱՏԱՆ ԴԵՂՈՐԱՅՔ ԲԱՅ ԹՈՂՆՈՂ ԲՈՒԺՔՐՈՋ (1 ԴՐՈՒՅՔԱԶԱՓ) ԵՎ ԹԱՂԱՄԱՍԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԲՈՒԺՔՐՈՋ (2 ԴՐՈՒՅՔԱԶԱՓ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

Մրցույթը կկայանա մեկ փուլով: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է.

2. Փաստաթուղթ (պետական նմուշի դիպլոմ) միջնակարգ մասնագիտական կրթության վերաբերյալ.

3. Անձնագրի պատճեն, հանրային ծառայության համարանիշը.

4. Ինքնակենսագրություն.

5. Թափուր աշխատատեղն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին, աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները՝ դրանց առկայության դեպքում.

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ՝ անձամբ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: Մրցույթները տեղի կունենան օգոստոսի 26-ին՝ ժամը 11-ին, «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի շենքում: Հասցեն՝ ք. Վանաձոր, Մյասնիկյան 17: Հեռ.՝ (0322) 2-04-14:

ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ